Մրցույթ՝ ՀՀ ԿԳՄՍՆ «Ս. Գևորգյանի անվան թիվ 189 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի <<Հայոց լեզու և հայ գրականություն>> /20 դասաժամ/, <<Կենսաբանություն>> /18 դասաժամ/, <<Պատմություն>> /12 դասաժամ/, <<Մաթեմատիկա>> /19 դասաժամ/, <<ՆԶՊ>> /23 դասաժամ/, <<Արվեստ>> /17 դասաժամ/ առարկաների ուսուցչի թափուր տեղի համար

Մրցույթն անցկացվում է 2 փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը: Յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացվում է առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1. Դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3*4 չափի,
2. Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
3. Անձը հաստատող փաստաթուղթ,
4. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
5. Ինքնակենսագրություն (Ձև 5),
6. Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
7. ՀՀ արական սեռի քաղաքացիները նաև զինվորական գրքույկ,
8. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
9. Որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում է: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2025 թ.սեպտեմբերի 10-ից մինչև սեպտեմբերի 23-ը ներառյալ, ամեն օր՝ 10:00-15:00-ը, բացի շաբաթ և կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2025 թ.սեպտեմբերի 24-ին՝ ժամը 13:00-ին**, ՀՀ ԿԳՄՍՆ «Ս.Գևորգյանի անվան հ.189 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ում. հասցեն՝ Դավիթաշեն 1-ին թաղամաս: Տեղեկությունների համար զանգահարել 010 36 92 20 հեռախոսահամարով: